ՔԱՂՎԱԾՔ
ՀԱՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ
01 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2011 Թ.

2011թ դեկտեմբերի 1-ն տեղի է ունեցել Հացավան համայնքի հաշվետու համայնքային ժողով:

Մասնակցությամբ՝
Համայնքի ավագանու անդամներ՝

1. Ան. Խաչատրյան
2.Ար. Խաչատրյան
3. Մ. Ղարիբյան
4. Մ. Սարգսյան
5. Վ. Պետրոսյան

Համայնքի ղեկավարի աշխատակազմից՝

1. Է. Պետրոսյան
2. Ա. Խաչատրյան
3. Ա. Կարապետյան
4. Ն. Խաչատրյան

Հացավան Համայնքի Հայկ Մանուկյանի անվան դպրոցի տնօրինությունը իր աշխատակիցներով և համայնքի բազմաթիվ բնակիչներ

ՕՐԱ ԿԱ Ր Գ

1.Համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի կողմից կատարված աշխատանքները հանրությանը իրազեկելու մասին:
2. Ընթացիք հարցերի քննարկում:
3. Համայնքում առկա խնդիրների և ծրագրերի մասին:

Լսեցին `

Համայնքի ղեկավար Շ. Սարգսյանին , նա իր զեկուցման մեջ նշեց համայնքում կատարած աշխատանքների և կատարվելիք ծրագրերի մասին :

Գյուղում ապրում են 615 մարդ, որից տղամարդ՝ 300, կին՝ 315:

Բնակչության սոցիալական կազմը հետևյալն է՝

1. Երեխաներ (0-6 տ.) -- 46 մարդ
2. Դպրոցականներ (7-17 տ.) ---59
3. 18-65 տարեկան -- 510
4. Թոշակառուներ -- 77
5. Փախստականներ --
6. Միակողմանի ծնողազուրկ երեխաներ -- 17
7. Հայրենական պատերազմի մասնակիցներ --1
8. Հաշմանդամներ -- 5
9. Նպաստառուներ /ընտանիք -- 15
10. Զոհվածի ընտանիքներ -- 1
11. Ընտանիքների թիվը --158
12. Գրանցված ընտրողների թիվը -- 476
13. Ազատամարտիկների ընտանիքներ -- 4

Հացավան համայնքի 2011-2015թթ. Սոցիալ – տնտեսական զարգացման քառամյա ծրագրով նախատեսվել է՝

1.Դպրոցի ցանկապատի կառուցում 5000000 դրամ
2. Համայնքում կոյուղու կառուցում 40000000 դրամ
3. Խմելու ջրագծի կառուցում 20000000 դրամ
4. Մշակույթի տան վերանորոգում 35000000 դրամ
5.Գյուղապետարանի շենքի վերանորոգում 5000000 դրամ

Համայնքի ճանապարհային ցանցը վերանորոգման,ասֆալտապատման կարիք ունի, անհրաժեշտ է ասֆալտապատել 3 կմ ճանապարհներ և փողոցներ:

Ներհամայնքային ոռոգման համակարգում խողովակաշարեր փոխելու անհրաժեշտություն կա սակայն ֆինանսական միջոցներ չլինելու պատճառով առայժմ այդ աշխատանքները չեն իրականացվում:

Ոռոգման ներհամայնքային համակարգը չի գործում,գյուղը զրկված է ոռոգման ջրից դիմել ենք <<Գառնի- Գեղարդ >> ՋՕԸ-ին հարցին դրական լուծում տալու համար:

Համայնքի Վարչական շենքի 1-ին հարկի 1 սենյակ տրամադրված է համայնքի ավագանուն, 1սենյակ բուժ կետին, 1 սենյակ գրադարանին:

Համայնքի մշակույթի տուն գտնվում է անմխիթար վիչակում որի պատճառով այս բնագավառի աշխատանքները թերի են:
Մսուր-մանկապարտեզը չի գործում երեխաների քանակի և ֆինանսական միջոցներ չլինելու պատճառով:
Համայնքը խմելու ջուր ստանում է «7 աղբյուրներ» կոչվող աղբյուրներից, որի խողովակաշարն անցնում է Գեղարդ, Գողթ և Գառնի համայնքների տարածքով, տարիների ընթացքում խողովակաշարը ենթարկվել է կոռոզիաի և վերանորոգման կարիք ունի փնտրում ենք հովանավորներ:
Ներհամայնքային փողոցներից, որոնց երկարությունը կազմում է 4 կմ ՝ ասֆալտապատված է միայն 1.5 կմ-ը,մնացածը ոչ բարվոք վիճակում է, փնտրում ենք հովանավորներ 2012 թվականին մնացած մասը ասֆալտապատելու համար :
Համայնքում կա 3 հուշարձան՝ նվիրված Հայրենական պատերազմի /1941-1945թթ./ զոհվածների հիշատակին,աղբյուր հուշարձան և հնագույ գերեզմանոց:
Համայնքում գործում է աղբահանության կենտրոնացված համակարգ,աղբը հեռացվում է է համայնքի տարածքից կատարվել է 50000 դրամի աշխատանք:
Համայնքում կա 158 առանձնատուն , Կան մի քանի կիսակառույց տներ որոնց շինարարական աշխատանքները կավարտվեն 2012 թվականին:
Համայնքի վարչական տարածքը կազմում է 1892 հա, որից՝

1. Վարելահողեր----------321.05 հա
2. Խոտհարքեր ----------98.4
3. Արոտավայրեր----------328.91հա
4. Անօգտագործելի հողեր----------250.5 հա
5. Դաշտային ճանապարհներ----------25.0 կմ
6. Քարի հանք 0.6 հա
7. Տնամերձ հողեր----------36.91 հա
8. Դպրոց----------1.5 հա
9. Հուշարձան----------1.5 հա
10. Գյուղամիջյան փողոցներ----------4.1 կմ
11. Սեփականաշնորհված հողեր----------379.0 հա
12. Մեկ հողաբաժնի չափը----------1.81 հա
13. Պետ. պահուստային հողեր----------78.0 հա

Գյուղն ունի մեկ միջնակարգ դպրոց՝որտեղ սովորում են 59 աշակերտներ,դպրոցն ապահովված է ջեռուցման համակարգով:

Գործող գրադարանն ունի 5850 կտոր գիրք, որը տեղավորված է գյուղապետարանի շենքում միջոցներ չկան նոր շենք կառուցելու համար: Գյուղում գործում է բուժկետ, որտեղ աշխատում է 1 բուժքույր: Բուժկետը գտնվում է գյուղապետարանի շենքում:Չկան անհրաժեշտ պայմաններ: Ծնելիությունը գյուղում նվազել է 85-97%-ով:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
(01.01.2011. 01.12.2011թ. ժամանակահատվածի համար)

հ/հ	Եկամուտները ըստ եկամտատեսակների	Տարեկան պլան	VI եռամսյակի պլան	Փաստացի	Կատ. %
1	Հողի հարկ	1790.0	1790.0	1559068	87.1
2	Գույքահարկ	530.0	530.0	508.492	96.0
3	Տեղական տուրք	30.0	30.0	30.300	101.0
4	Դոտացիա	6066,8	6066,8	5561,1	91,7
5	Այլ եկամուտ	638,7	638,7	0	0
6	Տարեսկզբի ազատ մնացորդ	826,0	826,0	70,0	8,5
7	Հողի վարձավճար	420,0	420,0	410816	97,8
8	Պետ.կող. պատ. լիազ.իրակ. գծով	600,0	600,0	150,0	25

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱՂՍԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
(01.01.2011թ. 01.12.2011թթ ժամանակահատվածի համար)

Հ/Հ	Ծախսեր	Տարեկան պլան	VI եռամսյակի պլան	Փաստացի	Կատ. %
1	Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	6370.0	6370.0	5064240	79.5
2	Պարգևատրումներ	392000	392000	392000	100
3	Սոցիալական ապահովության վճարներ	1226.5	1766.5	807480	65.8
4	Էներգետիկ ծառայություն	140.0	290.0	90000	135
5	Համակարգչային ծառայություն	35.0	35.0	35000	100
6	Մասնագիտական ծառայություն	50.0	50.0	20400	40.8
7	Տեղեկատվական ծառայություն	20.0	20.0	20000	100
8	Կապի ծառայություն	60.0	117.8	117800	100
9	Վարչական սարքսարքավորումներ	70.0	70.0	70000	100
10	Նվեր. այլ. շահ. չհետ. Կազմակ.	27.0	27.0	0.0	0.0
10	Տրանսպորտային նյութեր	800.0	800.0	650000	81.2
12	Ոչ ֆին. ակտիվների գծով ծախսեր	638.7	638.7	0.0	0.0
13	Գործառնական և բանկային ծառայությունների ծախսեր	20.0	20.0	16500	82.5
14	Կոմունալ ծառայություններ	200.0	60.0	50000	25.0
15	Ներկայացուցչական ծախսեր	20.0	20.0	0.0	0.0
16	Գրասենյակային նյութեր և հագուստ	50.0	130.0	70000	140
17	Այլ նպաստներ բյուջեից	200.0	200.0	110000	55.0
18	Պարտադիր վճար	15.0	7.2	7200	48
19	Բնական աղետներից առաջացած վնասվածքների վերականգնում	50.0	50.0	0.0	0.0
20	Ընդանուր բնույթի այլ ծառայություններ	40.0	0.0	0.0	0.0
21	Շենք. և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	50.0	20.0	0.0	0.0
22	Պահուստային միջոցներ	510.0	0.0	0.0	0.0
23	Շենքերի և շին. Կապիտալ վերանորոգում	756.0	756.0	0.0	0.0
24	հասցեավորում	70.0	70.0	0.0	100
25	Այլ մշակութային կազմակերպ.	100.0	340.0	340.0	340

Համանքի ղեկավար Շ.Սարգսյան